## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 13-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՄԱՅԻՍԻ 2-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 2-ի թիվ-4 հերթական նիստի օրակարգը՝

1. Ղուկասավան համայնքի 2017թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-38-63-99 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 14-Ն

## ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ.ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի 5)-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ղուկասավան համայնքի 2017թ. վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարներ եկամտատեսակը պակասեցնել 13.0 հազար դրամով

բ. գույքահարկ համայնքի տարածքում գտնվող շենք շինությունների համար եկամտատեսակը ավելացնել 700.0 հազար դրամով

գ. գույքահարկ փոխադրամիջոցներից եկամտատեսակը ավելացնել 300.0 հազար դրամ

դ. այլ ոչ հարկային եկամուտներ եկամտատեսակը ավելացնել 28.0 հազր դրամ

ե. տեղական տուրքեր և վճարներ եկամտատեսակը ավելացնել ընդամենը 128.64 հազր դրամ այդ թվում

1) ոգելից խմիչքի իրացման թույլտվության համար 71.07 հազր դրամ,

2) ծխախոտի վաճառքի թույլտվության համար եկամտատեսակը ավելացնել 31.92 հազար դրամ

3) հանրային սննդի իրացման թույլտվության համար եկամտատեսակը ավելացնել 25.65 հազար դրամ

զ. ընդամենը ավելացված 1143.64 հազար դրամի չափով ավելացնել ծախսերը՝

1) 01-01-01 գործադիր մարմիններ նախահաշվին ավելացնել 100.0 հազար դրամ այդ թվում 4212 էներգետիկ ծառայություններ հոդվածին 100,0 հազար դրամ:

2) 11-01-02 համայնքի պահուստային ֆոնդ նախահաշվին ավելացնել 1043.64 հազար դրամ այդ թվում՝ 4891 պահուստային միջոցներ հոդվածին 1043.64 հազար դրամ:

2. Ղուկասավան համայնքի 2017թ. ֆոնդային բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 06-04-01 արտաքին լուսավորություն նախահաշվից պակասեցնել 300.0 հազար դրամ, այդ թվում 5113 շենք շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածից 300.0 հազր դրամով

բ. 04-03-02 նավթամթերք և բնական գազ նախահաշվից պակասեցնել 534.972 հազար դրամ այդ թվում 5112 շենք շինությունների կառուցում հոդվածից 484.972 հազար դրամ 5134 նախագծահետազոտական ծախսեր հոդվածից 50.0 հազար դրամ:

գ. ընդամենը պակասեցրած 834.972 հազար դրամը ավելացնել՝

1)06-03-01 ջրամատակարարում նախահաշվին 280.972 հազար դրամ, այդ թվում 5112 շենք շինություն հոդվածին 280.972 հազար դրամ

2) 09-02-02 հանրակրթական ուսուցում նախահաշվին ավելացնել 554.0 հազար դրամ, այդ թվում 5113 շենք շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածին 554.0 հազար դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԾՈՎԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽՆԺԱԿՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ